

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ

1925-2007

ԵՌԱՆԿՅՈՒՆԻ

Վիպակի սյուժեն ու կառուցվածքը

Առաջադրանքներ

1. Կարդա՛ *«Եռանկյունի»* վիպակը:
2. Մեկնաբանի՛ր վերնագիրը:
3. Վերաշարադրի՛ր վիպակի բովանդակությունը:
4. Ներկայացրո՛ւ վիպակի կառուցվածքը՝ նշելով գլուխների վերնագրերը:

Գլուխ	Վերնագրեր
1-ին	
2-րդ	
3-րդ	
…	

5. Ներկայացրու դիպաշարը՝ համաձայն տրամագրի:



6. Ներկայացրու վիպակում արծարծված խնդիրները:
7. Ցույց տուր, թե ում անունից է զարգանում պատումը:
8. Կարդա՛ վիպակից վերցված ներքոհիշյալ հատվածը: Կարծի՛ք հայտնիր, թե որքանով են համարժեք այն սխալները, որոնց մասին խոսվում է: Ասելիքդ հիմնավորի՛ր:

«Նրանց ոչ ոք դարբին չէր ասում: Նրանք իրենք էլ անվանում էին իրար «դամրչի», իսկ դարբնոցը՝ «դամրչնոց»:

Երբ դպրոցում շարադրություն գրեցի, որ հայրս դամրչի է, սխալ համարեցին ու նշանակեցին «երկու»: Ու այդ օրվանից ես իմացա, որ «դամրչի» ու «դամրչնոց» ***սխալ*** *են, հայերեն չեն:*

Հայրս միշտ իր ընկերների շրջանում ծոր տալով երգում էր երկարաձիգ թուրքերեն երգեր, որոնցից ես ոչինչ չէին հասկանում, ուրեմն դրանք էլ էին ***սխալ****»:*

9. Գտի՛ր հատվածում կիրառված հարադիր բայը:
10. Նկարագրի՛ր Մկրտիչների աշխարհը: Խոսքդ հիմնավորի՛ր վիպակից բերված համապատասխան հատվածներով:
11. Նկարագրի՛ր 5-րդ Մկրտիչի՝ Մկրտիչ Պախալպաջյանի հայտնվելը դարբնոցում: Ինչո՞ւ էր դժվար նրա՝ դարբին լինելուն հավատալը:
12. Հիշի՛ր, թե Մկրտիչներից որին է վերաբերում հատվածը, ինչու և ինչով էր տուժել նա:

«Ամենազարմանալին այն էր, որ տուժել էր միայն մեկը՝ «եռանկյունու» ամենաուժեղ մարդը»:

13. Բացատրի՛ր, թե ինչու է տղային զարմացնում այն , որ վարպետ Մկրտիչը Ամերիկայում դարբնությամբ է զբաղվել իր ասած Սենեկա և Բերնս քաղաքներում: Տեղեկությո՛ւն հավաքիր այդ հատուկ անունների վերաբերյալ: Հիմնավորի՛ր ասելիքդ:
14. Վիպակի գլուխներից մեկը վերնագրված է *««Եռանկյունին» և «Պագանինին»»:* Ինչո՞ւ: Համացանցից կամ այլ աղբյուրներից տեղեկությո՛ւն հավաքիր Պագանինիի մասին, պատրաստի՛ր զեկուցում կամ տեսասահիկ, ներկայացրո՛ւ դասընկերներիդ:
15. Ունկնդրի՛ր իտալացի կոմպոզիտոր և ջութակահար Նիկոլո Պագանինիի կատարումները: Պագանինիի մասին տեսասահիկում օգտագործի՛ր նրա մեղեդիներից որևէ մեկն իր իսկ կատարմամբ:
16. Կարդա՛ ստորև բերված հատվածը: Բացատրի՛ր, թե ինչն էր տղայի և մնացածների տարակուսանքի պատճառը: Ներկայացրո՛ւ սիրո քո պատկերացումը:

««Կյանքում ամեն ինչ ուրիշ ձևով է լինում»,- մտածեցի ես: Երբեք սերը այսպես չէի պատկերացնում:

Դարբնոցում ամեն ինչ լռեց, կարծես սառեց:

Մկրտիչներն անշարժ էին: Անշարժ էին նաև Մկոն և իր ընկերուհին»:

17. Մեկնաբանի՛ր տղայի խղճահարության պատճառը: Բնութագրի՛ր նրան այս դրվագի հիման վրա:

«*Լյուբան բարձրացավ տեղից: Նրանք իրար ձեռք բռնած գնացին դուրս: Լյուբայի սպիտակ շորի վրա զնդանի մուրն էր մնացել:*

Ուզում էի ծիծաղից փռթկալ, սակայն, չգիտես ինչու, փոխարենը խղճացի նրանց»:

18. Վերևի հատվածի կետադրությունը համապատասխանեցրո՛ւ այսօրվա պահանջներին:
19. Համաձայն ես վիպակից բերված հետևյալ մտքին: Հիմնավորի՛ր կարծիքդ:

«Տխրությունը և ուրախությունը երբեք առանձին չեն լինում»:

Վիպակի կերպարները

Առաջադրանքներ

1. Ներկայացրու 5 Մկրտիչների բնավորության ու ճակատագրերի նմանություններն ու տարբերությունները:

Նմանությունները	Տարբերությունները
_____	_____
_____	_____
_____	_____

2. Բնութագրիր առաջին անգամ դարբնոցում հայտնված Լյուբային՝ օգտվելով վիպակի համապատասխան հատվածից:



3. Մեկնաբանիր Լյուբայի կերպարի փոփոխություններն ու դրանց դրդապատճառները:
4. Ներկայացրու Լյուբայի դերը դարբնոցի և Մկոյի կյանքում:
5. Գնահատական տուր Մկոյի և Լյուբայի՝ պատերազմ միասին մեկնելու որոշմանը:
6. Ըստ քեզ՝ ինչպիսի՞ն են Մկոյի և Լյուբայի զգացմունքները: Հիմնավորիր ասելիքդ:
7. Հիշիր օտարազգի կանանց՝ հայ գրականության մեջ ներկայացված կերպարներ, որոնք բացասական դեր են խաղացել գլխավոր հերոսների կյանքում: Լրացրու աղյուսակի համապատասխան սյունակները:

Օտարազգի կինը	Ստեղծագործությունը	Հերոսի կյանքում նրա ունեցած դերը

8. Ներկայացրու Մկրտիչներից յուրաքանչյուրի ճակատագիրը:

5 Մկրտիչները	Նրանցից յուրաքանչյուրի ճակատագիրը

9. Մեկնաբանիր դարբնոց - եռանկյունու դերը վիպակի հերոսների և նրանց բնավորությունների ձևավորման ու ճակատագրի հարցում:
10. Վերլուծիր կերպարների հոգեբանական առանձնահատկությունները:
11. Բացատրիր հեղինակի՝ կերպարներ կերտելու, նրանց հոգեբանությունը խոսքի և լռության միջոցով ներկայացնելու վարպետությունը:

Վիպակի գաղափարը, լեզուն և ոճը

Առաջադրանքներ

1. Վերաշարադրիր վիպակի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը:
2. Ուսումնասիրիր գրողի՝ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարները ընդգրկուն ու համոզիչ ներկայացնելու լեզվական հնարները:
3. Ներկայացրու վիպակի լեզվաոճական առանձնահատկությունները:
4. Հատվածից դուրս գրիր պատկերավորման միջոցները:

«Հայրս ծերացել էր: Ծերացել էր «եռանկյունին», խունացել: Քուրայի կրակն անգամ այն չէր: Իսկ փուքսը տնքում էր իր մաշված կաշվով և, խռխռալով թոքախտավորի պես, հազիվ շնչում:

Ու մի վայրկյան «եռանկյունում» հնամենի մրոտ պատերի ու երկաթների միջից կրկին լսվեց ջութակի ծվծվոցը և դուդուկի մեղմ, հոգեպարար նվագը»:

Մակդիր	Համեմատություն	Փոխաբերություն

5. Ներկայացրու վերոբերյալ հատվածում առկա օրինաչափությունները:
6. Մեկնաբանիր տարածության և ժամանակի ազդեցությունը «եռանկյունու» և նրա բնակիչների ճակատագրի վրա:
7. Ցույց տուր մշակութային տարբեր արժեհամակարգ ունեցող մարդկանց փոխհարաբերությունները դարբնոցում՝ բերելով օրինակներ համապատասխան հատվածների տեսքով: Ըստ քեզ՝ ո՞րն էր նրանց համակեցության բանաձևը: Սահմանիր քո տարբերակը:
8. Դուրս գրիր բարբառային բառերը, ներկայացրու նրանց գրական համարժեքները:

Բարբառային բառեր	Գրական տարբերակ

9. Ցույց տուր հերոսների խոսքի բարբառային դրսևորումներն ու նրանց դերը կերպարների հարաբերությունները բացահայտելու և կոլորիտ ստեղծելու գործում:
10. Վիպակի «Վերջերգից» դուրս գրիր վերհուշը վերհուշի մեջ ներկայացվող հատվածը: Նկարագրիր զգացողություններդ:

Ի՞նչ եմ տեսնում	Ի՞նչ եմ զգում
Ի՞նչ եմ լսում	Ի՞նչ «գույն ունի» զգացածս

11. Վերլուծիր հեղինակի՝ պատկեր կերտելու, հույզ, զգացում փոխանցելու առանձնահատկությունները:
12. Դիտիր ռեժիսոր Հենրիկ Մալյանի նկարահանած համանուն ֆիլմը: Հղումը՝ https://www.youtube.com/watch?v=M6OdiXLk5w0
13. Գտիր վիպակի դիպաշարի (սյուժեի) և ֆիլմի բեմագրի (սցենարի) տարբերությունները:
14. Ցու՛յց տուր և հիմնավորիր մեկում կամ մյուսում եղած առավելությունները:
15. Մեկնաբանիր, թե ինչու է Աղասի Այվազյանը՝ որպես գրող և միաժամանակ բեմագրի հեղինակ, այլ լուծումներ տվել գործողությունների և կերպարների զարգացմանը: